ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2014թ. N____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ գլխին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Սիսակյան փողոցի հ.22 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի 4-րդ հարկի հ.54՝ 75.9քմ և 7-րդ հարկի հ.105՝73.9քմ ընդհանուր մակերեսով երեք սենյականոց բնակարանները փոխանակել Շինարարների փողոցի քանդման ենթակա հ.15 շենքի 1-ին հարկում գտնվող սեփականության իրավունքով «Տաք հաց Սոնա» ՍՊԸ-ին պատկանող 76.4քմ մակերեսով խանութի հետ։

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Շինարարների փողոցի քանդման ենթակա հ.15 շենքի 1-ին և նկուղային հարկերում գտնվող սեփականության իրավունքով Լաուրա Գրիգորյանին և Արթուր Հովհաննիսյանին պատկանող 234,6քմ տարածքը փոխանակել նախկին շենքի փոխարեն նոր կառուցվող Շինարարների փողոցի հ.15 հասցեի շենքի 1-ին հարկի՝ Երևանի սեփականությունը հանդիսացող համապատասխան հասարարական տարածքի հետ։

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին Շինարարների փողոցի քանդման ենթակա հ.15 շենքի 1-ին և նկուղային հարկերում գտնվող սեփականության իրավունքով «Վիհ» ՍՊԸ-ին պատկանող համապատասխանաբար՝ 79.9քմ և 67.1քմ մակերեսով տարածքները փոխանակել նախկին շենքի փոխարեն նոր կառուցվող Շինարարների փողոցի հ.15 հասցեի շենքի 1-ին հարկի՝ Երևանի սեփականությունը հանդիսացող համապատասխան հասարակական տարածքների հետ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ.682 որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն՝ նախատեսվում է Երևան քաղաքում 4-րդ կարգի վթարային Շինարարների փողոցի հ.15 շենքը քանդել ամբողջությամբ։

Շենքը 4-րդ կարգի վթարային է, գտնվում է խիստ վթարային վիճակում և առկա է փլուզման վտանգ։

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշումը՝ Շինարարների փողոցի հ.15 քանդման ենթակա շենքի 34 բնակարանների վերաբերյալ կայացվել են Երևանի քաղաքապետի որոշումներ՝ բնակարաններ հատկացնելու մասին։ Շենքի 1-ին և նկուղային հարկերում են գտնվում ոչ բնակելի տարածքներ, որոնց փոխհատուցման հարցը մնացել է չլուծված։

Վերը նշված շենքի քանդման աշխատանքները իրականացնելու և նույն վայրում նոր բազմաբնակարան շենք կառուցելու համար շենքում գտնվող ոչ բնակելի տարածքների սեփականատերերի հետ կազմակերպվել են բազմաթիվ բանակցություններ և քննարկումներ, որոնց արդյունքում Երևանի քաղաքապետարանի և սեփականատերերի միջև ձեռք է բերվել համաձայնություն, համաձայն որի <<Տաք հաց Սոնա>> ՍՊԸ-ին պատկանող Շինարարների փողոցի քանդման ենթակա հ.15 շենքի 1-ին հարկում գտնվող 76.4քմ մակերեսով խանութի փոխարեն (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 27.09.2004թ. հ.1159818 վկայական) առաջարկվել է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսակյան փողոցի հ.22 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի 4-րդ հարկի հ.54՝ 75.9քմ և 7-րդ հարկի հ.105՝73.9քմ ընդհանուր մակերեսով երեք սենյականոց բնակարանները (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.05.2013թ. N15052013-01-0119 և 15052013-01-0165 վկայականներ)։

Բարձրացված հարցը ուսումնասիրելու նպատակով անկախ որակավորում ունեցող «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ի կողմից կատարվել է անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ, որից հետևում է, որ Շինարարների

փողոցի հ.15 շենքի 1-ին և նկուղային հարկերում քաղաքացի Սոնյա Բասոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի շուկայական արժեքը կազմում է 43700000 ՀՀ դրամ, իսկ Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.54 և հ.105 հասցեներում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանների շուկայական ընդհանուր արժեքը կազմում է 43100000 ՀՀ դրամ (համապատասխանաբար 21550000 + 21550000 ՀՀ դրամ)։

Քաղաքացիներ Լաուրա Գրիգորյանի ու Արթուր Հովհաննիսյանի, ինչպես նաև <<Վիհ>> ՍՊԸ-ի սեփականատերի հետ կատարված բանակցությունների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն իրենց Շինարարների փողոցի քանդման ենթակա հ.15 շենքի 1-ին և նկուղային հարկերում գտնվող, սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար՝ 234.6քմ, 79.9քմ և 67.1քմ մակերեսով հասարակական տարածքների՝ (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 25.01.2005թ. հ.1121050, 29.06.2000թ. հ.0229846 և 01.11.2004թ. հ.1168902 վկայականներ) փոխարեն տրամադրել համարժեք մակերեսով հասարակական տարածք նույն տեղում կառուցվող շենքի 1-ին հարկից՝ պարտավորվելով անմիջապես ազատել տարածքները։

Արդյունքում ելնելով շենքի վթարային վիճակից և նկատի ունենալով Շինարարների փողոցի հ.15 շենքում օրեցօր ավելացող ճաքերը և քայքայումները՝ անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար, նպատակահարմար է գտնվել ընդունելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ